ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

№ 3—4, 1944

Պրոֆ. Ռ. Ռ. Պիոտրովսկի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՀՆԱԳՈՒՅՆ ԷՏԱՊՆԵՐԸ[1]

Դեռ մոտիկ անցյալում, Կովկասի հնագիտությանը վերաբերող գիտական աշխատություններում, հնարավոր էր համարվում լրջորեն գրել այն մասին, որ Կովկասում քարե դար գոյություն չի ունեցել, պղնձե դար՝ նույնպես և որ մարդիկ Կովկասում բնակություն են հաստատել, ունենալով բրոնզե դարի արդեն ձևավորված կուլտուրա։ Ռուդոլֆ Վիրխովը պալեոլիթի բացակայությունը մեկնաբանում էր նրանով, որ Կովկասի բնությունը հարմարություն չէր ընձեռում նախամարդուն, Էրնեստ Շանտրը կարծում էր, որ Կովկասում էնեոլիթը բացակայել է, իսկ Ուվարովը 1881 թ. պնդում էր, որ դեռևս Կովկասում հայտնի չէ «բրոնզի դարաշրջանը»։ Այս բոլոր կարծիքներն այս կամ այն ձևով հանդիպում էին նաև հետագա աշխատություններում։

Տակավին ոչ հեռու անցյալում, Կովկասի հնագիտությանը վերաբերող աշխատությունների հիմնական պրոբլեմն էր պարզել, թե որտեղից են եկել և ինչ ճանապարհներով են անցել այն ցեղերը, որոնք կուլտուրա են բերել Կովկաս։ Արդյոք նրանք եկել են արևելքից, արևմուտքից, թե հարավից։ Երբեմն Կովկասը դիտվում էր որպես այն միջանցքը, որով շարժվում էին դաղթի դիմած ցեղերը, և Կովկասի լեռնային ժողովուրդների մեջ հաճախ տեսնում էին այդ դաղթածների մնացորդներին։ Ռուդոլֆ Վիրխովը ենթադրում էր երկու ճանապարհ, մեկը Միջին Ասիայից, մյուսը՝ Իրանից։ Էրնեստ Շանտրը ավելի հավանական էր համարում, որ դաղթը կատարվել է Միջագետքից, իսկ ժակ դը Մորգանը հեռավոր ճանապարհներ էր վերականգնում Հեռավոր Արևելքից Կենտրոնական Ասիայի վրայով դեպի Կովկաս։ Գեորգ Վիլկեն, դիտության մեջ մի ամբողջ ուղղության՝ գերմանական շովինիզմի ներկայացուցիչը, պնդում էր արիացիների Կովկաս գալիքելու և իրենց հետ մետաղը բերելու մասին, դրանով իսկ ընդգծելով Կենտրոնական Եվրոպայի արիական ցեղերի կուլտուրական գերազանցությունը ասիական ժողովուրդների հանդեպ։

Բոլորովին մոտիկ անցյալում, հին աշխարհի պատմությանը վերաբերող աշխատություններում, Կովկասը դիտվում էր որպես ոչ լիարժեք տարր և այդ պատճառով նրան տրվում էր օժանդակ, միջանկյալ տեղ, երբեմն որպես ծայրամաս, երբեմն Ասիան ու Եվրոպան իրար հետ կապող մի կամուրջ, իսկ երբեմն էլ այդ երկու աշխարհներն իրարից բաժանող մի պատնեշ։

Միտումնավոր դրույթների այդ ամբողջ բազմազանությունն ու հակասականությունը հատկանշական է հին պատմագիտության համար, որը

[1] Զեկուցված է ՀՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Ընդհանուր ժողովում, 1944 թ. ապրիլի 11-ին։

վճռական դերը տալիս էր միգրացիային, կուլտուրան ժողովուրդների կողմից բերված լինելուն, ընդ որում Նրանցից ոմանք կուլտուրայի իրավունք ունեին, իսկ մյուսները՝ ոչ։ Այս բոլորը հատկանշական է պիտուքյանը այն շրջանի համար, երբ բավարար չափով նյութ չէր հավաքված, երբ այդ նյութի ուսումնասիրության մակարդակը տակավին ցածր էր։ Ես բերի ոչ թե պատահական պիտակների կարծիքները, այլ XIX դարի վերջի և XX-ի սկզբի հեղինակավոր հնագետների, որոնք որոշակի ազդեցություն են գործել Կովկասի հնագույն պատմության ուսումնասիրության զարգացման վրա։

Վերջին 20 տարվա ընթացքում Կովկասի հնագույն պատմության ուսումնասիրության բնագավառում զգալի հաջողություններ են ձեռք բերված։ Երևան է բերվել քարե դարը՝ և՛ պալեոլիթը, և՛ նեոլիթը, ինչպես և նրանց հետ կապված պղնձե դարը — էնեոլիթը։ Պարզվեց, որ անընդունելի է նաև Կովկասի ուսումնասիրության այն հարցադրումը, թե Կովկասը Ասիայի ու Եվրոպայի միջև ընկած մի ինչ-որ տարր է։ Կովկասի պատմությունը, այս հասկացության մեջ առնելով նաև Անդրկովկասի, Լեռնային ու Հյուսիսային Կովկասի պատմությունը, սկսեց ուսումնասիրվել որպես հին աշխարհի պատմության մի որոշ մաս, այն հայեցակետից, թե ինչ է տվել Կովկասը հին աշխարհին և ինչ են տվել նրան շրջապատող երկրները, որովհետև պատմական պրոցեսը ուրիշ բան չէ, բայց եթե կուլտուրայի տարրերի խաչաձևման անընդհատ պրոցես։ Եվ հին աշխարհի պատմության մեջ բացասելով գաղթերի վճռական նշանակությունը, մենք բնավ չենք ուզում սրեկ չափով նվազեցնել կուլտուրական փոխառումների, որպես կուլտուրայի զարգացման հիմնական գործոններից մեկի, նշանակությունը — կուլտուրական ձեռքբերումներն ավելի շարժուն են, քան դրանք ստեղծող մարդիկ։ Ժամանակակից ժողովուրդների կազմավորման նախընթաց շրջանի Կովկասի հնագույն պատմությունն ու կուլտուրան տակավին թույլ է ուսումնասիրված։ Բոլորովին մոտիկ անցյալում, Կովկասի հնագույն հուշարձանները, որ հայտնի են միայն հնագիտական նյութերից, միացվում էին «նախաքրիստոնեական հնություններ» ընդհանուր անվան տակ և դիտվում էին մոնոլիտ կերպով, որպես մի ինչ-որ ամբողջական, միասեռ բան։ Եվ նրանց ուսումնասիրությունն սկսվել է, իսկապես, ոչ վաղուց։

1871 թվականին, խճուղու շինության ժամանակ, Մցխեթի մոտ բացված հին դամբարաններում գտնվել են Անդրկովկասի համար բոլորովին նոր նյութեր, որոնք որոշ չափով հիշեցնում են Հյուսիսային Օսեթիայում՝ Կոբանի դամբարաններում դրանից երեք տարի առաջ երևան բերված նյութերը։

Նույն 1871 թվականին Ակ. Երիցյանը դամբարանների պեղումներ է կատարել Ատանահնի շրջանի Որնակ (այժմ՝ Ակներ) գյուղի մոտ։ Ակ. Երիցյանի պեղումները պիտակներին կատարված առաջին պեղումներն էին, որոնց մասին գրված հաշվետվությունը, որ բանում է „Кавказ" թերթում ընդամենը չորս այունակ, պետք է Անդրկովկասի «նախաքրիստոնեական» հուշարձանների հետազոտության առաջին փորձը համարել։

Վերլուծելով հանված նյութը, Ակ. Երիցյանն այն համեմատում էր իր ժամանակ հայտնի արևմտա-եվրոպական նյութի հետ, և այդ՝ հիման վրա Որնակում իր հետազոտած դամբարանները վերագրում էր բրոնզե դարի երկու ժամանակաշրջանի։

Այդ ժամանակից ի վեր Նյութ կուտակելու ինտենսիվ աշխատանք սկսվեց։ 1871 թվականին հիմնվեց Կովկասի Հնագիտական Կոմիտեն, որի նախագահ Ա. Պ. Իերժեն Կովկասի հնագիտության մասին կազմեց մի զեկուցագիր, որի մեջ առանձնապես շեշտվում էին, այսպես կոչված, «կլասիկ հնությունները», այն հուշարձանները, որոնց «վրա անվնաս մնացել էին հունական և լատինական արձանագրություններ»։

Ա. Պ. Իերժեի այս դիտողությունը չափազանց բնորոշ է հնությունների ուսումնասիրության վիճակը որոշելու համար, հնություններ, որոնց շրջանակի մեջ մտնում էին, գլխավորապես, Հունաստանի և Հռոմի հուշարձանները, այսինքն՝ «կլասիկ հնությունները»։ XVIII դարի հենց սկզբին Հայաստան այցելած ֆրանսիացի բուսաբան դը Տուրնեֆորը գիտեր Անիի ավերակների մասին, բայց նա մի կողմ թողեց դրանք, կարծելով, որ այնտեղ որևէ հետաքրքրական բան չկա և որ միայն հունական քաղաքներն են ուշադրության արժանի, քանի որ այդտեղ կարելի է երևան բերել պատմական արժեքավոր աղբյուր հանդիսացող արձանագրություններ։ Պատահական չէ, որ դեռևս Պլատոնի երկերում հանդիպող «հնագիտություն» տերմինն էլ XVIII դարի գիտնականները, օրինակ, Քրիստափոր Հայնեն, հասկանում էին իբրև բացառապես Հունաստանի ու Հռոմի հուշարձանների նկարագրություն և կլասիֆիկացիա, մի բան, որ պահպանվել է նաև մեր «անտիկ» տերմինի մեջ, և միայն նոր Նյութ հայտարերելուց հետո սկսեցին այդ տերմինը հասկանալ ավելի լայն իմաստով։

Կովկասի Հնագիտական Կոմիտեն, ճիշտ է, հոգու էր հնագիտության այդպիսի մեկնաբանությունից, բայց նրա անդամները, անտարակույս, մեծ ուշադրություն էին նվիրում քրիստոնեության, անտիկ շրջանի և հին Արևելքի հուշարձաններին։

1873 թվականին Հնագիտական Կոմիտեն վերակազմվեց որպես Կովկասի հնագիտությունը սիրողների Ընկերություն։ Դեկտեմբերի 9-ին, Ընկերության բացման օրը, Ա. Պ. Իերժեն հանդես եկավ մի ճառով, որի մեջ հանրագումարի բերեց Կովկասի հնագիտական ուսումնասիրության արդյունքները և ունկնդիրներին ծանոթացրեց Ընկերության ենթադրվող գործունեության պլանին։

Անդրկովկասի հնագիտական ուսումնասիրության զարգացման վրա զգալի ազդեցություն գործեց 1881 թվականին Թիֆլիսում հրավիրված V հնագիտական համագումարը։ Համագումարը նախապատրաստող կոմիտեն հնագիտական լայն աշխատանք ծավալեց, ընդ որում հայտարերված բոլոր հնություններն ստացավ Կովկասյան Թանգարանը։ Համագումարը լավագույն գիտնականներին հավաքեց ոչ միայն Ռուսաստանից. օտարերկրյա գիտնականների շարքում էին գերմանական էթնոլոգիական պրոգրեսիվ շկոլայի ներկայացուցիչ Ռուդոլֆ Վիրխովը և ֆրանսիական անտրոպոլոգ Էրնեստ Շանտրը։

Հինգերորդ հնագիտական համագումարը բացառիկ նշանակություն ունեցավ Կովկասի հնագիտության զարգացման համար։ Բացի Մոսկվայի Հնագիտական Ընկերության և օտարերկրյա խոշորագույն գիտնականների հետ սերտ կապ հաստատելուց, համագումարը հնությունների նկատմամբ հետաքրքրություն առաջ բերեց նաև լայն շրջաններում, ժողովրդականացնելով Կովկասի հնագիտական հուշարձանները։

Համագումարից հետո, անցյալ դարի 80-ական թվականներից ինտենսիվ պեղումներ սկսվեցին, գլխավորապես դամբարանների, որոնք թանգարանային նշանակություն ունեցող իրերն մեծ նյութ էին տալիս։

Հայաստանում, 1887—88 թ.թ., Դերեղ գետի ուղղությամբ, դամբարանների պեղումներ կատարեց Փակ դը Մորդանը, որը հետագայում մեծ հռչակ ձեռք բերեց Եգիպտոսում և Առաջավոր Ասիայում ունեցած իր բարեհաջող գյուտերի շնորհիվ։ Իր պեղած 976 դամբարաններից դուրս եկած իրերի մեծ մասը նա հանձնեց Լիոնի Թանգարանին։

Շամքորի և Դեսարեկի շրջաններում, 1888—90 թ.թ., Վոլդիմար Բելկը, որ աշխատում էր Սիմենսի պղնձաձուլարաններում, Վիրխովի հանձնարարությամբ պեղեց մոտավորապես 300 հին դամբարան, ընդ որում հանված հնությունների կոլեկցիան նա ամբողջությամբ ուղարկեց արտասահման։

Անդրկովկասում Մոսկվայի Հնագիտական Ընկերության կողմից աշխատում էին Ա. Ս. Ուվարովը և Ա. Ա. Իվանովսկին, հնագիտական հանձնաժողովից՝ Ա. Ա. Ռորբինսկին, Ն. Ցա. Մառը և Է. Ռեոսլերը, իսկ Կովկասի հնագետներից հնագիտական աշխատանքներին գործոն մասնակցություն ունեին Ադ. Երիցյանը և Ե. Ս. Տակայշվիլին։

Դա հնագույն Անդրկովկասի ուսումնասիրության առաջին էտապն էր։

Այդ էտապի հատկանշական գիծն այն էր, որ պեղումներն առավելապես հետապնդում էին թանգարանային նյութ գտնելու նպատակներ, ընդ որում պեղումները կատարվում էին արդեն լավ հայտնի, մի քանի անգամ հետազոտված վայրերում, որոնք, դրա հետևանքով, մեծ ժողովրդականություն էին ստացել գիտական գրականության մեջ։ Այդպիսի վայրեր էին՝ Կորանի դամբարանադաշտը Հյուսիսային Օսեթիայում, Սամթավրի դամբարանները Մցխեթի մոտ, Որնակը Սանահնի մոտ և Ռեղկին Լագերը Ազստաֆա գետի վրա։

Անդրկովկասի «մինչքրիստոնեական» ամբողջ շրջանը դիտվում էր մոնոլիտ կերպով, որպես ինչ որ մի ամբողջականություն ու միասնականություն, և միայն երկչոտ փորձեր էին արվում հուշարձանները տարբեր ժամանակների վերապրելու և նրանց հաջորդականությունը սահմանելու վերաբերմամբ։ Այսպես, Է. Ռեոսլերը Երբեմն որոշ դամբարաններում կուրգանների տարբեր տիպերի հարաբերական հաջորդականություն էր սահմանում, իսկ Ժ. դը Մորդանը փորձում էր իր հետազոտած նյութից զատել տարբեր ժամանակների պատկանող մի քանի խմբեր։ Ժամանակագրական հաջորդականությունը որոշելու համար հիմնական չափանիշը երկաթե իրերի առկայությունն ու քանակությունն էր դամբարաններում։ Բացարձակ թվագրման փորձերից հետազոտողները սովորաբար հրաժարվում էին բոլորովին, թեև ընդհանուր հակում է նկատվում հնությունը չափազանցելու։ Այսպես, Ժ. դը Մորդանը Ռեղկին Լագերի տիպի դամբարանները, համարելով դրանք իրեն հայտնի դամբարաններից հնագույնները, դնում էր 3000—2500 թվականներին (մ. թ. ա.), տալով այդ նույն հուշարձանների թվագրման և ներկայումս ընդունվածի միջև առնվազն 1500 տարվա տարբերություն։

Պետք է ասել, որ թվագրման հարցերում հնագետները հաճախ ուղղակի անզոր էին։ 1897 թվականին Մայկոպում պեղված մեծ կուրգանում բացվել է մի հարուստ դամբարան՝ մեծ քանակությամբ ոսկե

և արծաթե իրերով, որոնք իրենց ոճով հիշեցնում են հին-արևելյան իրերը և բոլորովին տարբերվում են Կովկասում առաջուց գտնվածներից։

Համաշխարհային հռչակ ստացած այդ կուրգանը հնագետները չեն կարողացել թվագրել նույնիսկ մոտավորապես, և ծայրաթվագրումների տարբերությունը հասնում է 3000 տարվա։ Այսպես, Սամոկվասովը և Սմիրնովը այն վերագրել են VIII—VII դարերին (մ. թ. ա.), Ֆարմակովսկին և Տալգրենը՝ II հազարամյակի կեսերին, մոտավորապես XVII—XVI դարերին (մ. թ. ա.), Էրերտը հակված էր վերագրելու մոտ 2200 թվականին (մ. թ. ա.), Գորոդցովը և Շմիդտը վերագրում էին III հազարամյակի կեսերին (մ. թ. ա.) և, վերջապես, Ռոստովցևը հարելով արևմտա-եվրոպական գիտնականների կարծիքին, որոնք Մայկոպի իրերը կապում էին շումերականի հետ, գտնում էր, որ այդ կուրգանը բնութագրում է IV հազարամյակի սկզբի (մ. թ. ա.) կուլտուրան։ Թվում էր, թե բոլորովին անհուսալի է գործը։ Կովկասի հնագիտության զարգացման առաջին էտապում հենց այդպես էլ էր, հնագույն հուշարձաններից շատերը մնում էին շարքից դուրս, որովհետև չէին կարող օգտագործվել, քանի որ իսպառ բացակայում էր զարգացած բրոնզին նախորդած հնագույն դարաշրջանների վերաբերյալ գաղափարը։

Բայց սկսվեց Կովկասի հնագիտության զարգացման երկրորդ էտապը, որը բնութագրվում է հին հուշարձանների խորը հետազոտությամբ։

Որևէ արդեն հայտնի հուշարձանի հետազոտության և պեղումների փոխարեն, հետազոտողը ընտրում էր որոշ շրջան, հանգամանորեն ուսումնասիրում էր այն և շերտագրորեն որոշում տվյալ շրջանում առկա հուշարձանների տարաժամանակությունը։

Այժմ սկսեցին Կովկասի հնությունները ուսումնասիրել ըստ առանձին ոչ մեծ շրջանների։ Նկատվում է, որ հնագետները հուշարձաններին մոտենում են գավառագիտական տեսակետից, և նրանց գործունեությունը սահմանափակվում է մի ոչ մեծ տերիտորիայով—միկրոշրջանով։ Այս էտապը, որ զգալիորեն առաջ շարժեց հնագիտական հետազոտության տեխնիկան ու մեթոդիկան և օրինաչափ մեծ նյութ տվեց ըստ առանձին շրջանների ըստ էության շարունակվում է նաև մինչև մեր օրերը։

Այսպիսով, Կովկասն ուսումնասիրված էր առանձին շուրջերով, և Կովկասի քարտեզի վրա գնդասեղի ծակոտիներով ու պայմանական նշաններով կարելի է գատել հնագիտորեն ուսումնասիրված այն վայրերը, որոնց բախտը բանել էր, քանի որ հետազոտող էր գտնվել նրանց համար։

Բայց Կովկասի հնագույն պատմության այսպիսի ուսումնասիրությունը չէր տալիս պատմական պրոցեսի ընդհանուր պատկերը, դժվարացնում էր շրջանների փոխադարձ կապը որոշելու, ժամանակագրական հարցերը լուծելու գործը՝ ամբողջ Կովկասի մասշտաբով։ Տարբեր կուլտուրաների իրար հետ ունեցած կապերը որոշվում էին լոկ ֆորմալ հատկանիշներով, ձևի ու օրնամենտացիայի համադրությամբ։

Կովկասի հնագույն պատմությամբ զբաղվող հնագետների առաջ ծառացած պրոբլեմները դուրս են գալիս այդ շրջանակներից։ Կովկասի հետազոտությունը ըստ միկրոշրջանների կատարված խոր աշխատանքով սահմանափակելու դեպքում չի կարելի մշակել այնպիսի կարդինալ պրոբլեմներ, ինչպես են՝ Կովկասի պատմության և կուլտուրայի զարգացման յուրահա-

տուկ գծերի հայտարերումը, առանձին բնագավառների զարգացման անհամաչափությունը, տեղական մետաղագործության առաջացումը, տափաստանների, նախալեռնային ու լեռնային շրջանների կուլտուրաների փոխհարաբերությունը, լեռնային շրջանների բնակեցման ու յուրացման ժամանակը որոշելը, Կովկասում հին-արևելյան կուլտուրայի և տափաստանների կուլտուրայի տարբեր երևան բերելը։ Իսկ այս պրոբլեմներն ունեն կարևոր նշանակություն։ Հասկանալի է, որ այդ բոլոր հարցերը լուծելու համար հարկավոր է խորը վերամշակման ենթարկել առանձին շրջաններից ստացված նյութերը, շերտագրորեն ուսումնասիրել դրանք՝ հաջորդականությունը սահմանելու համար։ Սամթավրի (Մցխեթի մոտ) դամբանադաշտի պեղումները, որ 1938—40 թ.թ. վերակսվեցին ավելի մեծ ծավալով և բազմաթիվ նյութեր տվին տարբեր ժամանակներից, սկսած բրոնզի դարաշրջանից, որին վերաբերում են պեղված դամբաններից 385-ը, և մինչև ուշ-հռոմեական ժամանակները, առաջնակարգ նշանակություն ունեն Կովկասի հնագիտական ուսումնասիրության համար։

Թրիալեթում 1936—40 թ.թ. կատարված պեղումները, որ հին հուշարձանների 12 կոմպլեքս տվին տարբեր ժամանակներից, սկսած Էնեոլիթի դարաշրջանից մինչև Սասանյան ժամանակները, հենարանային և ճշգրտող նյութ տվին ամբողջ անդրկովկասյան հնագիտության համար։

Նույնպես և Խանլարի շրջանում (Ազրբեջանում) 1930 թ. մինչև 1941թ. սիստեմատիկորեն կատարված պեղումները տվին առաջնակարգ նյութ, որը հնարավորություն է ընձեռում հետևելու կուլտուրաների հաջորդականությանը։

Բայց սա քիչ է։ Հնագույն Անդրկովկասի բնագավառում եղած այդ հետախուզումների հետ մեկտեղ անհրաժեշտ են այլ կարգի հետախուզումներ, որոնց Անդրկովկասի միջնադարյան հնագիտությունն արդեն անցել է այն ժամանակից ի վեր, երբ Անիում Ն. Յա. Մարը կատարում էր իր աշխատանքները։

Այժմ գալիս է Կովկասի հնագիտության զարգացման երրորդ էտապը, որն իր մեջ զուգորդում է առանձին շրջանում գտնվող հուշարձանների ուսումնասիրությունը լայն տերիտորիայի վրա գտնվող նրանց միաժամանակյա կոմպլեքսների հետազոտության հետ։

Չէ՞ որ լայն տերիտորիայի վրա հուշարձանների այդպիսի ուսումնասիրությունը միայն կարող է մտահորիզոն տալ պատմաբանին և նշել այն միտումնավոր դրույթների կատարելապես անհիմն լինելը, թե կուլտուրան Կովկաս է բերվել դրսից։

Կովկասի հնագույն պատմությանը վերաբերող նյութը, նրա նկատմամբ հիշտ մոտեցում ունենալու դեպքում, լրիվ պատկերությամբ ցույց է տալիս, որ Կովկասի հնագույն կուլտուրայի զարգացումը, Նեոլիթից մինչև երկաթի յուրացման ժամանակները, հանդիսանում է անընդհատ և ամբողջ Կովկասի համար միասնական մի պրոցես։

Ներկա զեկուցման թեման է՝ ցույց տալ կուլտուրայի զարգացման ընթացքը Հայաստանի տերիտորիայում՝ պղինձ-քարե դարից մինչև երկաթի յուրացումն արտադրության մեջ, այսինքն մինչև VI դ. (մ. թ. ա.)։ Հնագիտական նյութը մեզ հնարավորություն է տալիս որոշելու այդ հին կուլտուրայի հիմնական էտապները, այդ կուլտուրան կապելով ոչ միայն

Անդրկովկասի, այլև Հյուսիսային Կովկասի կուլտուրաների հետ։ Հյուսիսային Կովկասի համար Ա. Ա. Միլլերը որոշել է կուլտուրայի զարգացման երեք ստադիա, որոնք ընդգրկում են III հազարամյակի վերջից մինչև VI դ. (մ. թ. ա.) ժամանակաշրջանը։ Չնայած դրանք սահմանվել էին, գլխավորապես, Կաբարդինո-Բալկարիայից ստացված նյութի ուսումնասիրության հիման վրա, սակայն այդ ստադիաները ընդհանուր դուրս են գալիս Հյուսիսային Կովկասի համար։

Կովկասի պղնձե դարին նվիրված իր աշխատության մեջ Ա. Ա. Իսսոնը մի փորձ մանրամասնել է Հյուսիսային Կովկասի հուշարձանների պերիոդիզացիան և մի շարք դեպքերում փորձել է հաստատել դրանց ազերբ. անդրկովկասյան հուշարձանների հետ։

ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Նյութական կուլտուրայի Պատմության Ինստիտուտի հրատարակած «ՍՍՌՄ Պատմության առաջին հատորում 1939 թ. ես փորձել եմ տալ Անդրկովկասի և Հյուսիսային Կովկասի հնագույն հուշարձանների համահավաք պերիոդիզացիան։ Հետագա հայտագործումները ու աշխատանքները հիմնականում հաստատեցին նրա ճշտությունը։

Արդեն III հազարամյակի վերջին (մ. թ. ա.) Կովկասյան լեռնաշղթայից դեպի հարավ կազմավորվել էր մի հասարակություն՝ զարգացած նրստակյաց երկրագործությամբ և անասնապահությամբ։

Ուշ Նեոլիթի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրա զարգացումն ու տեմպերը համաչափ չեն եղել Անդրկովկասում և Հյուսիսային Կովկասում և որ ավելի ինտենսիվ զարգացում եղել է հարավում, որտեղ, գտնվելով ըստ հնագիտական նյութերի, երկրագործությունն ավելի շուտ է երևան եկել, քան Հյուսիսային Կովկասում։

Վերջին տարիների պեղումները ցույց տվին, որ հնագույն կուլտուրայի հուշարձանների հատկանշական կոմպլեքսները չի կարելի դիտել որպես տեղական երևույթ, քանի որ նրանք բնութագրում են կուլտուրական որոշ էտապներ լայն տերիտորիայի վրա։

Անդրկովկասում բարբարոսության միջին աստիճանի սկզբնական էտապի հասարակությունը, այսինքն՝ Էնեոլիթը, հնագիտական տերմինաբանությամբ ասած, լավագույն կերպով ներկայացված է Հայաստանի տերիտորիայում ուսումնասիրված և III հազարամյակի վերջին ու II հազարամյակի սկզբին (մ. թ. ա.) պատկանող հնագույն բնակատեղերով։ Այդ բնակատեղերից պեղումների միջոցով ուսումնասիրվել են Շնդավիթինը, Երևանի մոտ, 1936—1938 թ.թ., Շրեշ-բլուրը, Վաղարշապատի մոտ, 1913 և 1928 թ.թ. և Արմավիրի բլրի վրա, 1879 թ.։ Պետք է նկատել, որ վերջին երկու բնակատեղերի հետազոտողները, Լալայանը և Ուվարովը, չեն էլ ենթադրել, որ իրենք պատահականորեն հանդիպել են չափազանց հին կուլտուրայի հուշարձանների, թեև դրա համար արդեն տվյալներ կային։ Այսպես, Պ. Ֆ. Պետրովը, չլինելով մասնագետ հնագետ, դեռևս 1914 թ. ճիշտ գնահատել է առարկաների այն նույնատիպ կոմպլեքսի հնությունը, որ նա երևան է բերել Իգդիրի մոտ, Արարատի լավայով ծածկված հողաշերտում, ուր, դարձյալ նրա կողմից, հայտարերվել են ուրարտական շրջանի թաղումներ։ Բայց Պետրովի կողմից Կովկասի Թանգարանին հանձնված նյութերը երկար ժամանակ մնացին պառկած, հենց դաշտային կապոցներով,

և գիտության համար նորից բացվեցին միայն Ռ. Ա. Կուֆտինի աշխատություններով։

Շնգավիթի բնակատեղում պեղումների ժամանակ հայտնաբերվել է չորս կացարան, կազմված մոտ 7 մետր տրամագիծ ունեցող կլոր սենյակից և սրան հարող ուղղանկյուն շենքերից։ Կացարանների պատերը շարված են եղել քառակուսի հում աղյուսով, պատերի ստորին մասերը եղել են քարաշար։ Կլոր սենյակների հատակը եղել է կոպճարկված և վերևից կավով ծեփած կամ թե հում աղյուսով պատած։

Պեղված բոլոր չորս կացարանների կենտրոնում գտնվել է մի-մի խոշոր քար, որ, ամենայն հավանականությամբ, որպես հիմք է ծառայել սյան համար, որի վրա հանգչել է ձողերից ու ճյուղերից շինած և կավով պատած կոնաձև ծածկույթը։ Կենտրոնական սյան կողքին գտնվել է մոտ մեկ մետր տրամագիծ ունեցող, երկ բաժանմունքից կազմված և ուռուցիկ քանդակներով զարդարված օջախը։ Կացարանի հատակի մեջ տեղավորված այդ օջախը հանդիսանում է թոնրի նախատիպը։ Օջախի մոտ գտնվել են յուրաձև մակուկանման տուփեր աղորիքներ և պաշարներ պահելու կավե անոթներ։ Այդ կացարանների խեցեղենը չափազանց հատկանշական է։ Բոլոր անոթները պատրաստված են ձեռքով, ունեն մինչև շոշոպալու աստիճանը փայլեցրած սև մակերես, որը զարդարված է ուռուցիկ և ներս սեղմված զարդարանքով, ընդ որում քանդակների այդ բոլոր ձևերը երբեմն հանդիպում են միասին։ Անոթները, որոնց պատրաստման համար մեծ աշխատանք է պահանջվել, զարմանք են պատճառում իրենց շինվածքի որակով, և շատերին շփոթեցնում է այն հանգամանքը, որ այդ կերամիկային հաջորդում է ավելի հասարակը։ Հետագայում, քանդակած և ուռուցիկ զարդարանքները հետզհետե անհետանում են, և անոթներն ստանում են հարթ ու ողորկ մակերես, ինչպես այդ կարող ենք տեսնել Էլարում հետազոտված, ավելի ուշ ժամանակի բնակատեղում ի հայտ բերված նյութից։

Շնգավիթում երևան բերված հիմնական գործիքները շինվել են որձաքարից և օբսիդիանից, դրանց մեջ կան այնպիսիները, որոնք կազմված են փայտե կամ ոսկրե հիմքի վրա ամրացված առանձին թերթերից, մյուսներն ամբողջական կարծր քարից են—քարե մուրճ՝ կոթի համար պատրաստված անցքով, և գնդաձև դուրգ։

Ոսկրից պատրաստվում էին նետի, տեգի, հերունի ծայրեր։

Քարե և ոսկրե շինվածքների գերակշռության պայմաններում կան նաև պինձե մանր առարկաներ—գնդասեղներ, քառակող հերուններ և ուլունքներ։

Հացի դրանից՝ № 2 կացարանում գտնվել է տափակ կացին ձուլելու համար ավազաքարից պատրաստած կաղապարի մի բեկոր։ Այդ նույն կացարանում կատարված պեղումներն ի հայտ են բերել հատիկների և ամբողջական հասկերի մեծ պաշարներ, որ վկայում են, թեպետ և պրիմիտիվ, բայց համեմատաբար զարգացած երկրագործության մասին։ Շնգավիթում հայտաբերված օրգանական նյութը, որ բացառիկ նշանակություն ունի նախնադարյան երկրագործության ուսումնասիրության համար, ներկայումս մշակվում է ակադեմիկոս Միքայել Թումանյանի կողմից։

Որ այդ հին կուլտուրայի մեջ երկրագործությունը զուգակցվել է անասնապահության հետ, այդ մասին վկայում են խոշոր եղջերավոր ան-

սուններին, ինչպես նաև ոչխարների, շների ոսկորները, այլև բնտանի կենդանիներ պատկերող կավե շինվածքները։ Այսպես, օղախի հետ կապված անոթակալները պատրաստվում էին խոյի կերպարանքով, իսկ Շրեշ-բլրի պեղումներից ստացված մի անոթակալ պատկերում է եղ։ Բացի դրանից՝ կան կենդանիներ պատկերող կավե և քարե կերպարանքներ, ինչպես և քարե կախիկ՝ եղան գլխի ձևով։

Սա է Ենգավիթի բնակատեղում գտնված նյութական հուշարձանների ընդհանուր պատկերը։ Այս բնակատեղին շատ մոտ են այն բնակատեղերը, որ գտնվում են Շրեշ-բլրի և Դյուլ-թափա բլրի վրա, Վաղարշապատի մոտ, Արմավիրի վրա, ինչպես նաև Կիրովականի մոտ գտնվող Թաղավորանիստ բլրի վրա, որտեղ երևան է բերվել ուռուցիկ քանդակներ ունեցող փայլուն կերամիկա և մակուկաձև աղորիքներ։ Կիրովականի Թանդարանի վարիչ Եղիա Մոմջյանը Թաղավորանիստի մերձակայքում երևան է բերել Էնեոլիթի շրջանի մի դամբարան՝ բրոնզե զարաշրջանի քարե արկղով ծածկված։

Այդպիսի նյութ հայտնի է նաև Նախիջևանի Ավտոնոմ ռեսպուբլիկայից, Նախիջևան քաղաքի մոտ գտնվող Դյուլ-թափա բլրի վրա 1904 թվականին Ե. Լալայանի կատարած պեղումներով և Կոր-թափա բլրի վրա ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Ազգերագրական ֆիլիալի դիտաշավի կողմից 1935—36 թ.թ. հավաքված նյութերով։ Ենգավիթի բնակատեղին մոտիկ Էնեոլիթյան բնակատեղեր հայտնի են նաև Վրաստանում։ Այսպես, 1939 թվականին, Ծալկայի շրջանում Ի. Ա. Կուֆտինը հետազոտելով կիկլոպյան բերդեր, սրանցից մի քանիսի ստորին շերտերում երևան բերեց առարկաների մի կոմպլեքս, որ համանման է վերը բերվածներին։

Բեշտաշենի բերդի ստորին շերտում ի հայտ են բերվել փայլուն սև կերամիկայի օրինակներ՝ ուռուցիկ զարդանկարով, նետի որձաքարե ծայրեր՝ իրենց կոթերով, և մակուկաձև աղորիքներ։ Այդ նույն շերտում գտնվել է մի կենդանու (խոյի կամ եղան) արձանիկ՝ ջարդված գլխով։ Բ. Ա. Կուֆտինը հայտարերել է նաև երկու դամբարան՝ Էնեոլիթի ժամանակաշրջանին պատկանող քարե արկղների մեջ։

Նման հուշարձաններ հայտնի են նաև Թրիլիսիի շրջանից։ Կրկնակի պարույրի ուռուցիկ զարդանկար ունեցող, Շրեշ-բլրի և Թրիալեթի կերամիկային շատ մոտիկ կերամիկա հայտարերել է Ե. Գ. Պչելինան Կոջորի մոտ գտնվող Կիկետի գյուղի մերձակայքում։

Արևելյան Անդրկովկասում մինչև օրս Էնեոլիթի ժամանակաշրջանի բնակատեղեր հայտնի չեն. պետք է ենթադրել, որ դրանք գոյություն ունեն, կենտրոնական Անդրկովկասի հուշարձանները կապելով Հարավային Դաղստանի հուշարձանների, մասնավորապես Կայանքենդ կայարանի մոտ գտնվող բնակատեղի հետ։ Այս բնակատեղը 1939 թ. ուսումնասիրել է Ա. Պ. Կրուգլովը, որը վերագրել է այն II հազարամյակի սկզբին (մ. թ. ա.) և բնութագրել է այսպես. «Բնակատեղն ամրացված է եղել պատնեշով, բնակարանները կառուցվել են քարից և կավապատ հյուսվածքից։ Տնտեսության հիմքը եղել է երկրագործությունը, որի մասին վկայում են քարե աղորիքները, սանդերը, մանդաղի որձաքարե ներդիրները։ Հացահատիկների առկայությունը վառարանի կավե սվաղի ստվար մասում և այն կավի մեջ, որից անոթներ են պատրաստել։ Ըստ Վ. Ա. Պետրովի որոշման՝ մը-

նացորդները պատկանում են կարծր ցորենին։ Տնտեսության մեջ դդալի դեր է խաղացել անասնապահությունը։ հանդիպել են խոշոր և մանր եղջերավոր անասունների ոսկորներ։ Կայանբենդի բնակատեղի կերամիկան, որ զարդարված է վերադիր օրնամենտով և հաճախ մշակված է փայլեցնելու միջոցով, իր մերձավորագույն զուգահեռներն ունի Անդրկովկասի հուշարձանների մեջ, ինչպես են, օրինակ, Շնգավիթի, Երեշ-բլուր և Գյուլթափա բնակատեղերը։ Այդ հուշարձաններին Կայանբենդի բնակատեղը կարող է մերձենալ նաև կուլտուրայի ընդհանուր գծերով։

ԵՊԻ Արևելյան Անդրկովկասի տերիտորիայում դեռևս հնարավոր չէ ցույց տալ II հազարամյակի սկզբի (մ. թ. ա.) վերը քննարկվածներին համանման բնակատեղեր, ապա այդ ժամանակաշրջանին վերաբերող գամբարաններ հայտնի են։ Է. Ռեոսլերը, դեռևս 1897 թվականին, Լեռնային Ղարաբաղում, Թաչենադեսի շրջանում, պեղել է մի շարք կուրգաններ, որոնց մի մասը պետք է վերագրել Էնեոլիթին։ Կուրգաններն ունեցել են մինչև 2,5 մետր բարձրություն քարակույտեր, որոնց տակ երբեմն են բերվել քառակուսի կամ ուղղանկյուն քառանկյունի սարգետնյա փոսեր՝ մեկական կամ երկուական թաղումներով։

Զենքերից գամբարաններում ի հայտ են բերված՝ երկու հատ օբսիդիանե նետգլուխներ, երկու հատ օբսիդիանե ջարդվածքներ, մեկ հատ որձաքարե գործիք, մեկ հատ գնդաձև գուրզ և պղնձե փոքրիկ դանակներ։ Կուրգաններում գտնված են ոսկուց պատրաստված առարկաներ — թերթ-ոսկուց շինված մի փոքրիկ գլան՝ ներս ճկված նախշով, և պարուրաձև ոլորած լարից պատրաստած մեկ հատ կախիկ։ Առանձնապես հետաքրքրական է կերամիկան, որ սև փայլով է, ուռուցիկ կամ ներս ճկված օրնամենտով և մոտ է Երեշ-բլրի կերամիկային։

Է. Ռեոսլերի հին պեղումների նյութը ներկայումս լրացված է Յա. Ի. Հումմելի աշխատանքներով։ 1939 թ. Սևանավանում նա հետազոտել է մի կուրգան, ուր բացվել են I հազարամյակի սկզբին (մ. թ. ա.) պատկանող իջուցիկ թաղումներ, իսկ կուրգանի հիմնական թաղումները տվել են հետևյալ նյութը. երկու հատ գնդաձև գուրզ, նետի որձաքարե բազմաթիվ ծայրեր իրենց կոթերով, մեծ թվով որձաքարի ջարդվածքներ, երեք հատ ոսկե ուլունք, մեկ հատ ոսկե գինդ, մեկ հատ պղնձե տափակ դաշույն, մեկ հատ պղնձե նիզակածայր և կավե անոթներ։ Այդ առարկաների նմանությունը կենտրոնական Անդրկովկասում երեսն բերվածների հետ՝ ակներև է։ Բարձր գուրզերը կազմում են զենքի ընդհանուր տիպը, նետի ծայրերն իրենց կոթերով մոտիկ են Բիչտաշենի բերդից հանվածներին, իսկ ոսկե շինվածքները և պղնձե առարկաները Սևանակերտի կուրգանը կապում են Թաչենադեսի կուրգանի հետ։

Դժբախտաբար Շնգավիթի բնակատեղում երեսն բերված պղնձե գործիքներն այնքան քիչ են, որ մենք չենք կարող պարզ պատկեր կազմել դրանց մասին և կապել Հյուսիսային Կովկասի դդալիորին ավելի լավ ուսումնասիրված մետաղե շինվածքների հետ։ Տափակ կացին, որի ձուլման կաղապարը գտնվել է Շնգավիթում, և Լեռնային Ղարաբաղում երեսն բերված տափակ դանակներն ու նիզակների ծայրերը, ասես, կարելի է մերձեցնել Կովկասի կուլտուրայի զարգացման առաջին էտապի 2-րդ շրջանի (ըստ Ա. ա. Միլլերի պերիոդիզացիայի) պղնձե շինվածքներին, այսինքն՝

Մայկոպի հռչակավոր կուրգանի կոմպլեքսին, մի կուրգան, որը տալիս է մեծագույն շինվածքների առավել վաղ շրջանի օրինակներ, որոնք, սակայն, բավական երևութին, եղել են հին-արևելյան կուլտուրայի ազդեցության տակ, ինչպես այդ ցույց են տալիս արծաթե անոթների վրա եղած ոսկե շինվածքներն ու նկարները։

Անդրկովկասում ի հայտ բերված պղնձե առարկաները, որոնք կազմում են Հյուսիսային Կովկասում գտնվածների լրիվ զուգահեռը, ներկայումս արդեն հայտնի են դարձել։

Վերջին ժամանակներս Բ. Ա. Կուֆտինը հրապարակեց ՉԱԳԻՍ-ի սեբիտորիայում, տասը մետր խորության վրա երևան բերված մի պղնձե լայնաբերան կացին և երկու երկարակոթ նիզակածայրեր։ Այդ առարկաներն այնպիսի յուրահատուկ ձև ունեն, որ դրանց նմանությունը Հյուսիսային Կովկասում գտնվածների հետ՝ չի կարելի պատահականությամբ բացատրել։

Անկասկած, առարկաների այդ նարգին է պատկանում պղնձե, բոլորովին հյուսիս-կովկասյան այն ձևերը կրկնող դուրը, որոնք պահվում են Ֆուքայիսի թանգարանում, որպես Մայկոպսկու դրջանի Զաքարի գյուղից ծագած ձևեր։

Անդրկովկասի և Հյուսիսային Կովկասի մետաղագործության առավել որոշակի ազերս են ցույց տալիս Վրաստանում, Կվրիլի գետի ակունքների մոտ գտնվող Սաչխերե գյուղի գամբարանից հանված նյութերը։ 1910 և 1929 թվականներին հետազոտված, տարբեր ժամանակների թաղումներ ունեցող այդ գամբարանում գյուրին կերպով ջոկվում է էնեոլիթի վերջին պատկանող առարկաների կոմպլեքսը։

Որանց մեջ առանձնապես բնութագրական են պղնձե կացինը և խոշոր գնդասեղները։ Կրկնակի մուրճիկներից կամ թե երկու իրար հատող փոքրիկ շրջաններից կազմված գլխամաս ունեցող ռսկայական այդ գնդասեղներն իրենց լիակատար համապատասխանությունն ունեն Լեռնային և Հյուսիսային Կովկասի նյութերի մեջ, բայց այդ վայրերի և Սաչխերոյի գամբարանի միջև էլ ավելի սերտ ազերս են ցույց տալիս պղնձե կացինները։ Դրանք Կովկասյան հնագիտության մեջ լավ հայտնի, այսպես կոչված կախակոթաս, խողովակաձև կոթ և փոքր ինչ կոր սայր ունեցող կացիններ են։ Կովկասում դրանք բնութագրական են բրոնզի դարաշրջանի երկրորդ ստադիայի հիմնական նյութի համար։ Կովկասում դրանք հայտնի են շատ վայրերում։ Այդպիսի երկու կացին երևան է բերված Արխազիայում, Կյուրդերե գյուղի մոտ գտնվող դոլմեններում, այդպիսի մեկ կացին ծագում է Կարսի շրջանից և երեքը՝ Լենինականի ու Սևանա լճի շրջանից։ Դժբախտաբար, այդ կացիններից լավ (այն էլ համեմատաբար) փաստագրված են միայն Արխազիայի դոլմեններից, էնեոլիթի վերջին պատկանող առարկաների կոմպլեքսում գտնվածները և այն կացինը, որ Սևանա լճի հարավ-արևմտյան ափին է. Լալայանը գտել է իր պեղումների ժամանակ։

Ագիաման և Ներքին Կարանլուխ (այժմ Մարտունի) գյուղերի արանքում, 1908 թվականին Ե. Լալայանը պեղել է քարակույտ ունեցող մի մեծ կուրգան։ Խոշոր քարերով շարված, մեգալիթյան կառուցվածքներ, մասնավորապես դոլմեններ հիշեցնող մի գամբարանում երևան է բերվել մեջքի վրա

պառկած մի կսախք, որի մոտ դրված են եղել պղնձե կախակոթոտ մի կացին, մի ապարանջան, անոթներ և ուլունքներ։ Այսպիսով, Հայաստանում մեղ հայտնի են, ճիշտ է, դեռես աննշան քանակությամբ, Էնեոլիթի վերջին պատկանող, Շնդավիթի կուլտուրային հետևող հուշարձաններ։ Շատ հավանական է, որ հենց այդ ժամանակներին է պատկանում Էլարի մոտ գտնվող, երկրագործության և առանձնապես անասնապահության հետագա զարգացումը նշող հին բանակատեղը։

Էլարի բնակատեղը մենք վերագրում ենք մ. թ. ա. II հազարամյակի առաջին կեսին։

Երկրորդ հազարամյակի (մ. թ. ա.) կեսերին էական փոփոխություններ են նկատվում Անդրկովկասի հասարակության մեջ։ Անասնապահության ծավալման զուգընթաց՝ հետզհետե հարստություն է կուտակվում առանձին ցեղերի ձեռքում։

Զարգանում է փոխանակությունը, ամրանում են կուլտուրական կապերը Առաջավոր Ասիայի երկրների հետ։ Բայց դրա հետ միասին ուժեղանում են նաև թշնամական հարաբերություններն Անդրկովկասի ցեղերի միջև, բռնագավթումը յուրահատուկ կուտակման ձև է ստանում, ընդ որում անասունները և արոտավայրերը դառնում են գավթումների հիմնական օբյեկտը։

Էնեոլիթի շրջանի բնակատեղերն առհասարակ գտնվում էին բնականից պաշտպանված տեղերում, սովորաբար՝ քարե պարիսպներով փոքր ինչ ամրացված բարձունքների վրա։

Երկրորդ հազարամյակի (մ. թ. ա.) կեսերին բնակատեղերը վերջնականապես ընդունում են ամրոցների տեսք, որոնք ունեին հսկայական քարերով շարված, երբեմն երկու մետր բարձրության պարիսպներ, ինչպես այդ կարելի է տեսնել Զանգու գետի աջ ափին, Քանաքեռի դիմաց գտնվող Ղզլ-դալա ամրոցում։

Կացարանները սովորաբար գտնվում էին նաև ամրոցի պարիսպներից դուրս, բայց վտանգի բոպեին, երբ թշնամին մոտենում էր, ամբողջ բնակչությունը, անասունների հետ միասին, թաքնվում էր անմատչելի պարիսպների ետևում։

Ցեղերի ներսում ևս սկսում է ուժեղանալ գույքային անհավասարությունը, որովհետև առաջնորդների ձեռքում կուտակվում էին նյութական մեծ արժեքներ։

Այդ կուլտուրան առանձնապես վառ կերպով երևում է թաղման այն չափազանց հարուստ հուշարձաններից, որոնք վերջին տարիներս հայտաբերվեցին Թրիալեթիում (Վրաստան)։

Բ. Ա. Կուֆտինի կողմից պեղված այդ ժամանակվա դամբարանները հանդիսանում էին կուրգաններ, երբեմն քարերից, որոնք ծածկում էին դամբարանի հսկայական, առանձին դեպքերում մինչև 7—9 մետր խորության, ամբողջապես խոշոր ողորկաքարերով պատած խուցը։ Հենց միայն դամբարանային այդ կառույցվածքը պատրաստելու համար, անկասկած, հըսկայական թվով բանվորական ձեռք է պահանջվել։ Ծալկայի շրջանի Թրիալեթիի թաղումները մեզ են հայտնել առանձնահատկությամբ և մինչև այդ չեղած բարբարոսական փարթամությամբ հագեցած կուլտուրայի պատկերը։

Եվ, անկասկած, դրանք ցեղերի առաջնորդների թաղումներն են, ընդ

տուս դամբարանի մեջ էր դրվում նրանց անձնական հարստությունը։ Մեռած առաջնորդը տեղավորվում էր դամբարանի կենտրոնում, երբեմն փայտյա ծանրաքաշ քառանիվ սայլի վրա, դամբանի մեջ, նրա մոտ դրվում էր նաև խոշոր ու մանր եղջերավոր անասունների ամբողջ միսը։

Առաջնորդի հետ նրա մերձավորներին կամ ռազմակիրներին թաղելու սովորությունը, ըստ երևույթին, այն ժամանակ դեռ չի եղել։

Թաղման կառքի շուրջը դրվում էին մեծ քանակությամբ կավե շքեղ անոթներ։ Կուրգաններից մեկում երևան է բերվել սև ու թուխ ներկերով նկարազարդված, գեղնագույն 24 անոթ, ինչպես և կարմիր ներկով լցված քանդակներով նախշած սև անոթներ։

Այդ ժամանակ զենքը պատրաստվում էր արդեն բրոնզից, ընդ որում որոշ առարկաներ դրվագվում էին արծաթով, երբեմն դաշույնների սայրերն էլ ամբողջապես լինում էին արծաթից։ Բայց մետաղ զենքի հետ մեկտեղ գործ էին ածում նաև քարե զենք, ինչպես, օրինակ, որձաքարե և օբսիդիանե արխայիկ ձևի նիզակածայրեր և գնդասեղի կլոր գլխամասեր։

Թրիալեթիի կուրգաններում առանձնապես գեղեցիկ են թանկարժեք մետաղներից պատրաստված առարկաները։ Ոսկի և արծաթե թասերի ու գավաթների մեջ աչքի է ընկնում մի ոսկե գավաթ, որը զարդարված է զնովի քարերով՝ փիրուզայով և սերդոլինով, այլև մանրաբուրգով, որ վկայում է ոսկերչական արվեստի բարձր աստիճանի մասին։

Այդ գավաթի հետ միասին դամբարանում գտնվել է արծաթե մի փոքրիկ դույլ, որն ունի ոսկե կանթ և ամբողջապես պատած է ծառերի մեջ գտնվող կենդանիների պատկերով։ Բայց, անտարակույս, Մալկայում գտնված առարկաներից ամենահետաքրքրականը արծաթե այն գավաթն է, որն ունի ցածր ոտք և պատած է քանդականկարներով։ Ստորին գոտու վրա գտնվում է արու և էգ պախրաների շարանը, վերին գոտու վրա պատկերված է մարդու իրանով և գազանների գլուխներով ու պոչերով, ձեռքներին անոթներ կրող ֆիգուրաների երթը։ Երթն ուղղվում է դեպի նույն կերպարանքն ունեցող, բայց ծառի մոտ, գահի վրա նստած մի ֆիգուրա։ Ոլխավոր ֆիգուրայի մոտ տեղավորված են երկու զոհասեղան և պառկած զոհակենդանիներ։

Այդ գավաթի վրա եղած պատկերումների մեջ հին Արևելքի արվեստի ազդեցությունն անկասկած է, մի բան, որ հաստատվում է նաև պատկերումների մանրամասներով։ Բայց չնայած Առաջավոր Ասիայի հին կուլտուրաների ազդեցությանը, որ արտահայտվել է ինչպես այս հուշարձանի, այնպես և մի շարք ուրիշների վրա, Մալկայի առարկաների յուրահատկությունն այնքան մեծ է և աղերսը Կովկասի տեղական կուլտուրաների հետ այնքան որոշակի, որ մենք պետք է դրանք դիտենք որպես Կովկասյան հասարակություններից մեկի բարձր զարգացման հասած կուլտուրայի հուշարձաններ։ Թրիալեթիի կուրգանները, անկասկած, պատկանում են ցեղային վերնախավին և վկայում են տեղի ունեցած գույքային ու սոցիալական խոշոր շերտավորման մասին։

Նույն կուլտուրային պատկանող շարքային թաղումներ տվել է արդեն վերը հիշված, Ղըզլ-ղալայի ամրոցի (Զանգուի վրա) մոտ գտնվող դամբարանը, որը Պ. Ի. Զարկովսկու կողմից հետազոտվել է դեռևս 1896 թվականին։ Ոչ բարձր քարակույտի տակ գտնվող ստորգետնյա թաղումնե-

րից յուրաքանչյուրը տվել է Թրիալեթիի կուրգաններից հանված միայն մի քանի անոթ։

Անկասկած, Անդրկովկասում դեռ կհայտարերվեն այդ կուլտուրայի հարուստ թաղումներ, որովհետև դժվար է ենթադրել, որ այն ժամանակ եղել է միայն մեկ կենտրոն և, բացի դրանից, Թրիալեթյան տիպի առանձին ոսկի առարկաներ հայտնի են դառնում նաև այլ շրջաններից։

Հատկանշական նկարազարդ կերամիկան տարածված է լայն տերիտորայի վրա։ Նրա ամենաբնորոշ օրինակները ծագում են Զուռնաբաղից (Ադրբեջանում), որտեղ պեղված գամբարանից դուրս են եկել 4 նկարազարդ անոթ, օրսիդիանե նիզակածայրի մի բեկոր և բրոնզե կամ պղնձի պարույրի կտորներ։

Անկասկած, հարուստ գամբարաններ, Թրիալեթիում պեղվածներին նըմանները, կհայտարերվեն նաև Հայաստանում. այս ուղղությամբ տակավին հետազոտական աշխատանք չի կատարվել, բայց դիպվածորեն գտնված առարկաները վկայում են այն մասին, որ այդպիսի օրինաչափները գրական արդյունք կտան։ Սրանից մի քանի տարի առաջ, շինարարական աշխատանքների ժամանակ, Ուղունլարում, Ալավերդու մոտ, գտնվել են՝ թերթոսկուց պատրաստված, վոգրիկ շրջաններով և սկավառակներով զարդարված մեկ հատ մեդալյոն, նույնպիսի զարդարանքներով մեկ հատ թիթեղիկ և գավազանի մեկ հատ ոսկի շրջազիր։ Այս բոլոր առարկաներն իրենց լրիվ նմաններն ունեն Թրիալեթիի կուրգաններից հանված նյութերի մեջ։

Այն հուշարձանների կոմպլեքսների թվագրումը ճշգրտելու համար, որոնց մեջ հանդիպում է նկարազարդ կերամիկա, չափազանց մեծ նշանակություն ունեն Երևանի մոտ, Մուխաննաթ-թափա բլրի վրա, 1936 — 1937 թ. թ. հաջողությամբ կատարված պեղումները, որոնց ժամանակ հետազոտվել է նյութի շերտագրական դասավորությունը։ Մուխաննաթ-թափայի ստորին շերտը, որ նկարազարդ կերամիկայի հետ միասին պարունակել է նաև սև, փայլեցրած կերամիկա, ծածկված է եղել ուրարտական շրջանի շերտով։ Նախիջևանի մոտ, Գյոլ-թափա բլրի վրա, Ե. Լալայանի պեղումների ժամանակ, նկարազարդ կերամիկան հայտարերվել է Շնգավիթի տիպի նյութեր պարունակող շերտից վերև։

Այդ դիտողություններն ամրապնդում են Անդրկովկասի II հազարամյակի կեսերի և երկրորդ կեսի (մ. թ. ա.) նկարազարդ կերամիկայի թվագրման վերաբերյալ ենթադրությունները, ընդգծելով նույն կերամիկան չափազանց հեռավոր ժամանակով թվագրելու անզորությունը։

Դեռևս 1895 թվականին հնագիտական հանձնաժողովը ստենանապահ խմբի սպա Ն. Վ. Գյոգորովից ստացել է հետապայում համաշխարհային հռչակ ձեռք բերած նկարազարդ կերամիկա, որ գտնվել է Արարատի ձախ ափին, Կարմիր-վանքի մոտ բացված գամբարանում։

Անոթները ունեցել են ջինջ ֆոնի վրա սև ու կարմիր ներկերով արված բազմագույն, արտաքին տեսքից Առաջավոր Ասիայի հին գունազարդ կերամիկան հիշեցնող նկարազարդություն։ Ուստի Կարմիր-վանքի գամբարանը մինչև վերջին ժամանակները վերագրվում էր խորին հնության՝ III և IV հազարամյակներին (մ. թ. ա.)։

Հին հնագիտության համար բնութագրական է ֆորմալիստական տենդենցը՝ ամեն մի գունազարդ կերամիկա, այդ թվում նաև անդրկովկա-

սյանը, կապել գիտական շրջաններում պոպուլյար դարձած՝ Իրանի և Թուրքմենիստանի (Մուղայի, Անաուի) գունազարդ կերամիկայի հետ, այն ամրողջությամբ վերագրելով III—IV հազարամյակին (մ. թ. ա.)։

Ես արդեն մատնանշել եմ, որ Անդրկովկասի տերիտորիայում այժմ մենք ունենք գունազարդ կերամիկա, որը շերտագրորեն կապված է II հազարամյակի կեսերի և երկրորդ կեսի (մ. թ. ա.) հուշարձանների կոմպլեքսի հետ։

Դրա հետ միասին պարզված է նաև, որ անդրկովկասյան գունազարդ կերամիկայի իսկական զուգահեռներ կան ինչպես Թյուրքիայում, այնպես էլ Իրանում։ Պետք է նկատել նաև, որ Կարմիր-վանքից ստացված նյութը միատարր չէ և նրա մեջ կարելի է տարբերել մ. թ. ա. II հազարամյակի ժամանակաշրջաններում պարփակվող առարկաների զանգ երեք կոմպլեքս։

Կարմիր-վանքից ստացված, բոլոր երեք ժամանակաշրջանների անոթները ինչպես ձևով, այնպես և զարդանկարներով իրենց համանմաններն ունեն առաջավոր-ասիական, հատկապես II հազարամյակի (մ. թ. ա.) նյութի մեջ, ինչպես այդ ցույց են տալիս Ուրմիո լճի մոտ, Լուրիստանում և Կաշանում գտնվող դամբարանները։ Միանգամայն ճիշտ է նաև Կարմիր-վանքի կերամիկան XIV—XII դ.դ. (մ. թ. ա.) խեթական կերամիկային համադրելը։ Անդրկովկասի բազմազան կերամիկան թվագրելու հարցում չպետք է անտես առնել նաև Վանի շրջանի գունազարդ կերամիկան, որը, 1939 թ. այնտեղ աշխատած ամերիկյան արշավախմբի դիտողությունների համաձայն, հիմնականում ոչ միայն նախորդում է ուրարտականին, այլև զուգընթացում է իր գոյությունը ուրարտականի հետ միասին։

Մեր թ. ա. II հազարամյակի վերջին է պատկանում Շախթախտի գյուղի մոտ գտնվող դամբարանը, որը պարունակում է երրորդ քարերից շինված շրջանների մեջ պարփակված քարարկղներ։ Դամբարանի մեջ տեղավորվում էր նաև ձին, որ ազդանշում է գյուղատնտեսության մեջ, անասնապահության քոչվորական ձևի գերակշռության կապակցությամբ, տեղի ունեցած էական փոփոխությունների մասին։

Միևնույն ժամանակ վերջնականապես ձևավորվում են նաև նահապետական հարաբերությունները, մի բան, որ պաշտամունքի մեջ արտահայտվել է կանանց արձանիկները տղամարդկանց արձանիկներով փոխարինելու միջոցով։

Մեր թ. ա. I հազարամյակի սկզբին Կովկասում ավարտվում է հասարակության զարգացման այն պրոցեսը, որ մենք նկատում ենք մ. թ. ա. II հազարամյակի ամբողջ ընթացքում։

Անասնապահությունը դառնում է տնտեսության հիմնական տեսակը, ընդ որում նախիրների մեջ սկսում են գերակշիռ տեղ բռնել մանր եղջերավոր անասունները—պրիմիտիվ հարստության կուտակման և մասնավոր սեփականության հիմնական աղբյուրը։ Ավելի ու ավելի աճող նախիրների և հոտերի կարիքները չէին կարող բավարարել անտառներում և բնակամերձ վայրերում գտնվող արոտային բաները։ Զգալով ընդարձակել այդ բազան, սկսում են ոչնչացնել անտառները և աստիճանաբար յուրացնել ալպյան մարգագետինները։ Անասնապահությունը կիսաքոչվորական բնույթ է ստանում, անասունները ամռանը սարերը տանելու հետևանքով առաջ է գալիս այսպես կոչված յայլաղային կամ քոչվորական անասնապահությունը։

Այդ կապակցությամբ ուժեղանում է նաև որսորդության նշանակությունը, որովհետև անասնապահները մի կողմից՝ պետք է իրենց անասուններր պաշտպաններին վայրենի գազաններից, իսկ մյուս կողմից՝ որսի միջոցով սարերում նրանք սնունդ էին ձեռք բերում իրենց համար։ Հատկապես դրանով է բացատրվում այն հանգամանքը, որ Անդրկովկասի հավատալիքների մեջ I հազարամյակի սկզբից (մ. թ. ա.) երկրագործական-արնգակնային հավատալիքի հետ զուգընթացարար նորից երևան են գալիս և ուժեղանում որսորդական պաշտամունքները։

Կիսաքոչվորական անասնապահության զարգացման հետ միասին խոբանում է և աշխատանքի բաժանումը լեռնային ու տափարակային շրջանների միջև, առաջիններում սկսում է գերակշռել անասնապահությունը, իսկ վերջիններում՝ ոռոգվող երկրագործությունը։ Երկրագործության տեխնիկան արդեն հասնում է մեծ բարձրության, երկրագործական աշխատանքների համար սկսում են օգտագործել բանող անասունների ուժը, երևան են գալիս երկրագործական բրոնզե գործիքները։ Երկրագործության հետ մեկտեղ զարգանում է նաև այգեգործությունը, որ շատ լավ փաստագրված է հնագիտական նյութերով, մասնավորապես այն նյութերով, որ ի հայտ են բերվել Խանլար քաղաքի մոտ գտնվող հին, I հազարամյակի հենց սկզբին (մ. թ. ա.) պատկանող բնակատեղի պեղումների ժամանակ։ Այնտեղ, կացարաններից մեկում գտնված մի մեծ կարասի մեջ երևան են բերվել խաղողի կորիզներ, որոնք վկայում են խաղողարուծության ու գինեգործության հեռավոր անցյալը Անդրկովկասում։ Իսկ մի ուրիշ կացարանի հատակում գտնվել է դեղձի կամ նուշի կորիզ։

Առաջին հազարամյակի սկզբին (մ. թ. ա.) ձևավորվել է նաև տեղական անդրկովկասյան մետաղագործությունը, որ կապված է եղել պղնձահանքեր ունեցող շրջանների հետ։

Արդեն համեմատաբար վաղուց արևմտա-եվրոպական դրականության մեջ այն ենթադրությունն է արվել, թե Առաջավոր Ասիայի մի դպալի մասը մատակարարվել է Անդրկովկասի պղնձով և Անդրկովկասի պղնձի հանքավայրերը հակադրվել են Հայկական սարահարթի երկաթի հանքավայրերին։ Ա. Ա. Իեսսենն առարկելով այդ տեսակետի դեմ, պարզորոշ կերպով ցույց տվեց, որ Կովկասի հին մետաղագործությունը սերտորեն կապված լինելով առաջավոր-ասիականի հետ, այնուամենայնիվ եղել է ծայրամասային։

Աչքի են ընկնում անդրկովկասյան մետաղագործության մի քանի շրջաններ, որոնցից յուրաքանչյուրը բնութագրվում է բրոնզե զենքերի ու գործիքների որոշակի ձևերով։ Կենտրոնական Անդրկովկասը բնութագրվում է Անդրկովկասի տարբեր շրջանների յուրահատուկ ձևերի զուգակցությամբ, կրելով նաև Հյուսիսային Կովկասի մարդերի ազդեցությունը։ Նրա պղնձահանքային բազան հանդիսացել են Փոքր Կովկասի հանքավայրերը՝ կենտրոն ունենալով Ալավերդու շրջանում։

Այդ ժամանակվա կուլտուրայի մեջ խիստ կերպով սկսեցին երևան գալ տեղական առանձնահատկությունները ցեղերի անջատման պրոցեսի ուժեղացման հետ միասին, միջցեղային թշնամանքը, որ հատկանշական է նախնադարյան-համայնական հասարակակարգի վերջին փուլի համար, պարզորոշ կերպով արտահայտվում է հնագիտական նյութերով։ Առաջին հազարամյակի սկզբին (մ. թ. ա.) պատկանող դամբարանների մեծամաս-

նության մեջ մենք գտնում ենք երբեմն չափազանց մշակված ձևի մեծ քանակությամբ զենք։ Բնակատեղերն արդեն հաստատուն կերպով ամրոցի, այն էլ խիստ ամրացված ամրոցի, տեսք էին ընդունել։

Անդրկովկասի հասարակության հիմնական *ոջիզո* նահապետական ընտանիքն էր, որի գլուխ էր կանգնած տղամարդը։ Այդ լավ արտացոլում են Սևանի շրջանում ե. Լալայանի կատարած պեղումների տվյալները։ Բացված դամբարանների մեջ կան այնպիսիները, որոնք պարունակում են երկուական կմախք՝ տղամարդու և կնոջ. այս դեպքում ըստ երևույթին մենք նկատում ենք այն սովորությունը, որի համաձայն կինը պետք է իր ամուսնուն ուղեկցեր դեպի դամբարան և նրա հետ թաղվեր։ Մենակ թաղված կանանց դամբարանները սովորաբար ավելի աղքատ են, քան տղամարդկանց դամբարանները, և կուրգանային մեծ հողակույտ չունեն։

Հասարակության զարգացման այդ ստադիայի համար հատկանշական հաճախակի պատերազմները, մի բան, որ հաստատում են նաև բնակատեղի հիմնական տեսակը հանդիսացող ամրոցները. բերում էին մեծ թվով գերիներ, որոնք ստրուկներ էին դառնում։

Անդրկովկասի այդ ժամանակվա հասարակությունն իր սոցիալական կառուցվածքի ընդհանուր գծերով շատ մոտ էր սկյութական հասարակությանը։ Նաև Անդրկովկասում, ինչպես և սկյութացիների մոտ, միակի կամ կրկնակի թաղումների հետ միասին պատահում են հարուստ թաղումներ, որոնք պատկանում են ցեղերի առաջնորդներին։

Սևանա լճի հարավ-արևմտյան ափին, Ագիաման գյուղի մոտ, 1906 թվականին ե. Լալայանը պեղել է մի կուրգան։ Կուրգանում բացվել է անտաշ քարերով շարված, 3,20 մետր երկարությամբ և 2,50 մետր լայնությամբ մի բարձր դամբարան։

Դամբարանում գտնվել է ճոխ քանդակներով զարդարված փայտե մի սայլ, փայտի ամրողջական կտորներից շինված չորս անիվներով։ Սայլի վրա պառկած է եղել տղամարդու մի կմախք, որի գոտկատեղի մոտ գտնվել է երկու դաշույն, իսկ աջ ձեռքի մոտ բրոնզե մի մեծ երկժանի։ Սայլի շուրջը անկանոն կերպով ընկած է եղել առաջնորդի թաղման ժամանակ սպանված ռազմագերիների կամ ստրուկների 13 կմախք։ Սայլի վրա և նրա շուրջը դրված է եղել զանազան ձևի կավե 18 անոթ։ Սայլի առաջ ընկած է եղել 4 կմախք, որոնց մոտ գտնվել է մի լուծ, որը զարդարված է եղել այծյամի տեսք ունեցող մի զանգակով։ Լծի մոտ, երեսի վրա պառկած է եղել մի տղամարդու, հավանորեն սայլապանի, կմախքը, որ նույնպես սպանվել է թաղման ժամանակ։ Սայլի անվի մոտ գտնվել են վարազի դանդ ու ոսկորներ։

Ցեղի առաջնորդի հետ ռազմագերիներին կամ ստրուկներին ևս թաղելու այսպիսի գեպքեր հանդիպում են նաև Ադրբեջանի կուրգաններում, որոնց մեծ մասը պեղել է Ռեսլերը։ Մեծ քանակությամբ իրերի հետ միասին կենտրոնում պարզված հիմնական կմախքի շուրջը կամ կողքերին, պատերի մոտ, գտնվել են այլ դիրքով, սովորաբար նստած, կմախքներ, առանց որևէ իրի կամ շատ աննշան քանակությամբ իրերով։ Հնագետները բազմիցս նշել են, որ ուղեկցող կմախքներն իրենց մարդաբանական տիպով տարբերվել են հիմնական կմախքից, դրանով իսկ հաստատելով այն կարծիքը. թե դրանք եղել են ռազմագերիների և կամ ստրուկների կմախքներ։

Անդրկովկասի I հազարամյակի սկզբի (մ. թ. ա.) հասարակությունը գտնվում էր մինչդասակարգային հարաբերությունների քայքայման առաջին փուլում և նրա մեջ արդեն ծնունդ էր առնում դասակարգային շերտավորումը, որը ուժեղանում և ձևավորվում է այն բանից հետո, երբ Հարավային Անդրկովկասի մարզերը մտնում են Ուրարտական պետության կազմի մեջ։

Մեր թ. ա. IX դարի վերջին ուրարտացիներն սկսեցին իրենց առաջին արշավանքները դեպի Հարավային Անդրկովկաս։ Սկզբում այդ արշավանքներն առավելապես կրում էին հափշտակողական բնույթ, և ուրարտացիների իշխանությունը Արաքս գետից դեպի հյուսիս անկայուն էր։

Անդրկովկասում ուրարտացիները հանդիպեցին նաև կուլտուրայով իրենցից տարբեր բնակչության. նրանք հանդիպեցին բազմաթիվ ցեղերի, որոնց գլուխ էին կանգնած առաջնորդներ։ Անդրկովկասի ցեղերի ընդհանուր միավորում այն ժամանակ դեռևս չկար. այդ միանգամայն պարզորոշ կերպով ցույց են տալիս ուրարտական արձանագրությունները, որոնք մեծ նյութ են ընձեռում VIII—VII դ. դ. (մ. թ. ա.) կովկասի ուսումնասիրության համար։

Ուրարտացիներն Անդրկովկասում իրենց իշխանությունն ամրապնդում էին ոչ միայն հրով ու սրով, նրանք ձգտում էին իրենց գրաված վայրերը նաև տնտեսական կախման մեջ դնել, այնտեղ կատարելով շինարարական մեծ աշխատանքներ։ Այդ նպատակով նրանք գրաված տեղերում կազմակերպում էին նաև իրենց վարչական կենտրոնները։ Այսպես, Անդրկովկասի վերաբերմամբ, IX դարի վերջին (մ. թ. ա.), Մենուայի օրով, այդպիսի մի կենտրոն գտնվում էր Արաքսից դեպի հարավ, Արարատ լեռան լանջին և միայն Արգիշտիի օրով այդ կենտրոնը Արաքսի վրայով տեղափոխվեց նրա աջ ափը, ուր կառուցվեց մի «հզոր ամրոց», որ կոչվեց «Արգիշտիխինիլի»։ Ավելի ուշ այդ նույն տեղում գոյություն ուներ Հայաստանի հնագույն քաղաքներից մեկը՝ Արմավիրը։

Ուրարտացիները Հարավային Անդրկովկասում ամրապնդելով իրենց իշխանությունը, հոգում էին ոռոգման սիստեմի մասին, ջրանցքներ էին կառուցում, խաղողի, պտղատու ծառերի այգիներ և պուրակներ էին տընկում, ամրոցներ, պալատներ և տաճարներ կառուցում։

Այն շրջանների հետ, որոնք չէին մտել Ուրարտական պետության կազմի մեջ, ուրարտացիները, ըստ երևույթին, առևտրական կապեր ունեին։ Դրանով կարելի է բացատրել, մասնավորապես, հին-արևելյան տիպի այն առարկաների գոյությունը, որոնք շինված են թանկարժեք նյութից և գտնվել են Լեռնային Ղարաբաղի դամբարաններում։ 1894 թվականին Ռեոսների կողմից պեղված Արջաձորի կուրգանում գտնվել է թերթ-ոսկուց պատրաստված, կենդանիների պատկերներ կրող, գլանաձև մի կնիք, որը իր ձևով չափազանց հատկանշական է առաջավոր-ասիական աշխարհի համար։

Ուրարտական ժամանակաշրջանի ոսկե իրեր հայտարերված են Խոջալուի դամբարանում։ Այսպես, № 11 կուրգանում, որտեղ երեսուն է բերված ասորեստանյան Ադադնիրարի թագավորի անունով մեկ հատ ապտյա ուլունք, գտնված են երկու հատ բարակ ոսկե օղեր՝ իրար չկպած ծայրերով, ոսկե սնամեջ ուլունքի մասեր և գծային օրնամենտով ոսկե թիթեղի բեկորներ։ Նույնպիսի առարկաներ գտնվել են նաև № 14 և № 20

կուրգաններում։ Վերջին կուրգանում առանձնապես հետաքրքրական է ոսկե անամեջ առարկայի մի բեկոր՝ ծայրերիս մեկում պատկերված առյուծի գլուխով, այսինքն՝ այնպիսի մի առարկա, որ չէր կարող պատրաստված լինել Անդրկովկասում։ Ուստի, Ադրբեջանի տերիտորիայում գտնված բոլոր ոսկե առարկաները բերված են համարվում հարավային մարզերից։ Զափազանց հետաքրքրական է նաև այն, որ հին-արևելյան պետությունների անկումից հետո, ոսկե իրերն Անդրկովկասի տերիտորիայում անհետանում են ընդհուպ մինչև մեր թվականության սկիզբը։

Հարավային Անդրկովկասի մարզերը Վանի թագավորության կազմի մեջ մտցնելու հանգամանքը մեծ չափով անդրադառնում է ամբողջ Անդրկովկասի սոցիալ-տնտեսական զարգացման վրա՝ այն իմաստով, որ, մի կողմից՝ արագանում է դասակարգային դիֆերենցիացիայի ձևավորման պրոցեսը և, մյուս կողմից՝ ուժեղանում են առևտրական ու կուլտուրական կապերը Առաջավոր Ասիայի հետ։

Դեպի Անդրկովկաս առաջխաղալու ժամանակ ուրարտացիները հենվում էին այնտեղ ոտքի ելած գերիշխող դասակարգի վրա և աջակցում էին նրա ձևավորմանը։ Հայաստանի տերիտորիայում լավ հայտնի ուրարտական բերդ-շենքերն արտացոլում են այդ հասարակական պրոցեսը իրենց միջնաբերդով, որը լավ պաշտպանված է ինչպես արտաքին կողմից, այնպես և բերդ-շենքի կողմից, որին հարել է այդ միջնաբերդը։

Ուրարտական մի սեպագիր արձանագրությունից երևում է, որ ուրարտացիներն իրենց գրված անդրկովկասյան շրջաններում թողնում էին տեղական կառավարիչներ, որոնք, այդպիսով, լիակատար կախման մեջ էին Վանի թագավորությունից։

Շատ մեծ է եղել ուրարտացիների կուլտուրական ազդեցությունը Անդրկովկասի վրա։

Տյուղատնտեսության բնագավառում ուրարտացիներն աջակցում էին Արարատյան հարթավայրի ոռոգման սիստեմի բարելավմանը, այլև նոր կուլտուրաներ մտցնելու գործին։ Կարմիր-բլրի վրա ուրարտական ամրոցում 1939—1941 թ. թ. կատարված պեղումները երևան բերին հացահատիկային կուլտուրաների մեծ բազմազանություն և բարձր որակ։ Այնտեղ ի հայտ են բերված վեցկողանի գարու, իտալական կորեկի, ցորենի, նուտի, ոսպի և այլնի մեծ պաշարներ, մի մասը տեղական բարելավված կուլտուրաներից, իսկ մի մասն էլ հարավից բերված կուլտուրաներից։ Հենց երկրագործական տեխնիկայի մեջ էլ, չհաշվելով ոռոգման սիստեմի գծով եղած ձեռնարկումները, պետք է ենթադրել, որ Վանի թագավորության ազդեցությամբ տեղի են ունեցել էական փոփոխություններ, մասնավորապես երկաթախոփ գութանի գործածությունը։

Կարելի է անվիճելի համարել նաև այն, որ երկաթի յուրացումը Անդրկովկասի բնակիչների կողմից տեղի է ունեցել ուրարտացիների անմիջական ազդեցության տակ. այդ ապացուցվում է նրանով, որ Անդրկովկասում հանկարծակի հայտնված երկաթե շինվածքների ձևերը շատ զարգացած են, յուրահատուկ, Վանի թագավորության կենտրոնական մասում գտնվածների հետ նույնատիպ, մինչդեռ բրոնզե շինվածքները լրիվ չափով պահպանել են իրենց նախկին կովկասյան տիպերը։ Անկասկած, երկաթի յուրացումը առաջնակարգ տեխնիկական նշանակություն ունեցող գործոն է, մանավանդ

որ Փոքր Կովկասի օդտակար հանածոներն էլ օժանդակում էին հին բրոնզե մետաղագործությանը բավական արագ կերպով փոխարինած երկաթե մետաղագործությանը։

Կարմիր-բլրի վրա կատարված պեղումները լայն ծավալով առաջ քաշեցին այն հարցը, թե հայերն իրենց կուլտուրան ժառանգել են ուրարտացիներից։ Պեղումներով հայտարերված նյութական մնացորդները շոշափման բազմաթիվ կետեր են տալիս հայկական կուլտուրայի և ուրարտական շրջանի հին կուլտուրայի միջև։ Բայց այդ ուղղությամբ դեռ աշխատանք չի կատարվել, թեև, անտարակույս, այդ աշխատանքը կռվաններ կտա հաստատելու այն գրույթը, թե հատկապես ուրարտացիներն են կուլտուրայի գծով հանդիսանում հայերի նախնիները։

Անդրկովկասի VIII—VI դարերի (մ. թ. ա.) կուլտուրան, բացի Առաջավոր Ասիայի երկրների հետ սերտ կապ ունենալուց, նաև փոխհարաբերության մեջ է եղել Հյուսիսային Կովկասի սկյութական կուլտուրայի հետ։ Հնագիտական նյութը միանգամայն պարզորոշ կերպով ցույց է տալիս, որ Անդրկովկասը լեռների վրայով կապ է ունեցել ոչ միայն Հյուսիսային Կովկասի, այլև մերձ-գնելրյան տափաստանների հետ։ Կովկասյան լեռները երբեք անջրպետ, պատնեշ չեն հանդիսացել երկու աշխարհների միջև։ Կիևի մոտ անդրկովկասյան ծագում ունեցող առանձին առարկաներ են գտնվել VII—VI դարերի (մ. թ. ա.) սկյութական կուրգաններում կամ այդ առարկաները մտել են նույն տեղում հայտարերված գանձի մեջ։

Արդեն վաղուց է ցույց տրվել, որ Կովկասի մետաղի իրերն իրենց ձևով մոտիկ են Ստորին Ավստրիայում, Հալշտատի դամբարանից հանված հնություններին և այդ հանգամանքը բացատրվել է արիացիների դաղթով Եվրոպայից Կովկաս։ Արևմտա-եվրոպական գիտական գրականության մեջ Ավստրիայի էթնոլոգիական շկոլայի այդ տեսությունը շատ մեծ շրջանառություն ունի, այն շատ որոշակի արտահայտվել է Վիլկեի աշխատությունների մեջ, որոնց մասին հիշատակվեց վերևում։ Ճիշտ է, ավստրիացի մի ուրիշ գիտնական՝ Ֆրանց Գանչարը դաղթի հակառակ հոսանք է տեսնում՝ Ասիայից Կովկասի վրայով Եվրոպա, բայց դա քիչ է փոխում գործի էությունը։

Կովկասի և Արևմտյան Եվրոպայի (ուր կան կովկասյան առարկաներին ձևով նման առարկաներ) միջակա տերիտորիայի ուսումնասիրությունը, այլև նյութական կուլտուրայի երկու կոմպլեքսների խորը հետազոտությունը որոշակի ցույց են տալիս, որ այդ կապը պետք է բացատրել ոչ թե ընդհանուր ծագմամբ, այլ ինքն՝ ուղիղ ազդակցությամբ, այլ ստաղիալ համապատասխանություններով։ Այդ երկու կուլտուրաների միջև չկա լրիվ նույնություն։ Չէ՞ որ կուլտուրական կապերը միշտ էլ հանդես են գալիս փոխկապերի ձևով և այդ պատճառով դրանք առանձնապես ամուր են այն հասարակությունների մոտ, որոնք իրենց զարդացման ստաղիայով մոտիկ են իրար։

Անդրկովկասի I հազարամյակի (մ. թ. ա.) երկրորդ քառորդի կուլտուրան ուսումնասիրելիս չի կարելի աչքաթող անել նաև միջերկրածովյան կուլտուրայի ազդեցությունը, որը զգացվել է մի լայն տերիտորիայի վրա։ Արխայիկ հունական առարկաների կամ հունական առևտրի առարկաների

Կովկաս մուտք գործելու հարցի պարզաբանման համար մեծ նշանակություն ունի հյուսիսային մերձ-սևծովյան շրջանի ուսումնասիրությունը։

Շատ քչերին է հայտնի, որ Կովկասում գտնվել են VII—VI դարերի (մ. թ. ա.) հին-եգիպտական ոչ սակավաթիվ իրեր, որոնք այնտեղ են տարվել հունական առևտրի միջոցով։ Դրանք մեծ մասամբ եգիպտական կահ-կարասիներ են, հիերոգլիֆներով և, անտարակույս, Նավկրատյան աշխատանքի արգասիք։

Վսեվոլոդ Միլլերը դրանք գտել է բարձր սարերում, Զեչեմի և Իականի վերին հոսանքներում։ 1840 թվին Դորելջիշվիլու կատարած պեղումներով նույնպիսի առարկաներ հայտարերվել են նաև լեռնաշղթայի մյուս կողմում։

Միանգամայն ակներև է դառնում, որ այդ առարկաները ոչ թե կանգ էին առնում փակուղիներում, առևտրական ճանապարհների ծայրերում, այլ լեռնաշղթան անցնում էին հին լեռնանցքներով։

Մեզ առանձնապես հետաքրքրում է այդ ճանապարհների ուղղությունը։

VII—VI դարերի (մ. թ. ա.) եգիպտական առարկաները Նավկրատիսից (մ. թ. ա. VII դարի կեսերին Եգիպտոսում հիմված հունական գաղութ) հյուսիսային մերձ-սևծովյան շրջաններն էին բերում միլետանացիները, որոնց ձեռքումն էր կենտրոնացած Եգիպտոսի առևտուրը Հունաստանի հետ։ Սև ծովի հյուսիսային ափին գտնվում էր նաև Օլվիա հունական գաղութը, և բնական է, որ առարկաներն այնտեղ մուտք էին գործում միլետական առևտրի միջոցով։

Հյուսիսից Կովկասյան լեռների վրայով եգիպտական առարկաները մուտք էին գործում նաև Անդրկովկաս։ Բայց դրանց մուտք գործելու համար կար նաև մի այլ ճանապարհ, այն է՝ հարավից. Առաջավոր Ասիայի վրայով։ Եգիպտական առարկաները հանդիպում են ամբողջ Փոքր Ասիայում, այնտեղ մի ժամանակ նույնիսկ պատրաստվում էին եգիպտականացրած իրեր, եգիպտական առարկաներ, համեմատաբար մեծ քանակությամբ, գտնված են նաև ասորեստանյան թագավորների պալատներում, իսկ առանձին առարկաներ հայտնի են Ղանից, Անիի շրջանից և Արմավիրի բլրից, ուր գտնվում էր Անդրկովկասի ուրարտական վարչական կենտրոնը։

Այսպիսով. ակներև է դառնում այն ենթադրությունը, թե նրանք թափանցում էին Կովկասյան լեռնաշղթայի վրայով և՛ հյուսիսից, և՛ հարավից, դրանով իսկ արտացոլելով կուլտուրական կապերի՛ միահյուսման ամբողջ բարդությունը։

Այս ամենը նշում է այն հիմքի չափազանց բարդությունը, որի վրա, վանի թագավորության անկումից հետո, ծագեցին հասարակական նոր կազմավորումներ, որոնց գլուխ էին կանգնած արմենները։ Հատկապես այդ հիման վրա էր ընթանում Անդրկովկասի ժողովուրդների ձևավորման և հայկական պետության ստեղծման պրոցեսը։

* * *

Ձեր ուշադրությանն առաջադրված զեկուցման մեջ ես փորձեցի ուրվագծել Անդրկովկասի պատմության հնագույն գարաշրջանների հնագիտական ուսումնասիրության վիճակը, ունկնդիրներին ծանոթացնել վերջին տարիների պեղումներով ի հայտ բերված նոր նյութին և ընդհանուր գծե-

րով բնութագրել նախնադարյան-համայնական կարգերի զարգացման պրոցեսը Հայաստանի տերիտորիայի վրա, սկսած էնեոլիթից և վերջացրած երկաթի սկզբնական յուրացման ժամանակաշրջանով։

Բերված նյութը ցույց է տալիս, որ Անդրկովկասում հասարակության զարգացումը հանդիսանում է միասնական և անընդհատ մի պրոցես։ Բաղաքի թեորիաները, կուլտուրան արդեն ձևավորված վիճակում Կովկաս բերելու թեորիաները բոլորովին սնանկ են և որևէ չափով չեն արդարացվում եղած նյութերով։

Արդեն III հազարամյակի վերջին (մ. թ. ա.) Անդրկովկասում գոյություն ունեին էնեոլիթի դարաշրջանի, այսինքն պղինձ-քարե դարի նստակյաց բնակատեղեր։ Նրանց տնտեսական հիմքը երկրագործությունն էր, որի հետ մեկտեղ գոյություն ուներ նաև անասնապահությունը։

Երկրորդ հազարամյակի սկզբին (մ. թ. ա.) անասնապահությունն սկսում է ինտենսիվ կերպով զարգանալ, և ընտանի կենդանիների կազմում սկսում են գերակշռել մանր եղջերավոր անասունները։ Անասունները դառնում են հարստության կուտակման հիմնական աղբյուրը՝ նախ ցեղի, իսկ հետո տոհմի ձեռքում։ Այն ժամանակվա հասարակության մեջ արդեն ձևավորվում են նահապետական հարաբերությունները։

Երկրորդ հազարամյակի կեսերին (մ. թ. ա.) Անդրկովկասում արդեն գոյություն ունեին իրենց հարստությամբ աչքի ընկնող ցեղեր, ինչպես այդ երևում է Թրիալեթիում բացված առաջնորդների դամբարաններից։

Դրա հետ մեկտեղ աճում է միջցեղային փոխանակությունը, ուժեղանում են կապերը հին Արևելքի երկրների հետ։ Տեխնիկայի մեջ քարին և պղնձին հետզհետե փոխարինում է բրոնզը։

Առանձին ցեղերի միջև հարատև թշնամական հարաբերություններ են ստեղծվում, ընդ որում ավարի և գրավման ցլխավոր օբյեկտ հանդիսանում են անասունները և արոտավայրերը, բնակատեղն այդ ժամանակ ամրոցի տեսք է ստանում։

Առաջին հազարամյակի սկզբին (մ. թ. ա.) բոլորում է անասնապահության զարգացման պրոցեսը։ Թիստ աճած նախիրներն ու հոտերը չեն բավարարվում նախկին արոտավայրերով, առաջ է գալիս անասնապահության մի նոր ձև—կիսաքոչվորական, երբ ամառ ժամանակ նախիրներն ու հոտերը տանում են սարերը։ Այդ կապակցությամբ առաջ է գալիս աշխատանքի բնական բաժանում լեռնային ու տափաստանային շրջանների միջև, առաջիններում սկսում է գերակշռել անասնապահությունը, վերջիններում՝ զուգվող երկրագործությունը։

Անդրկովկասի հասարակության ներսում ավարտվում է արհեստի անջատումը գյուղատնտեսությունից, ձևավորվում է Անդրկովկասի պղնձահանքային շրջանների հետ կապված տեղական բրոնզե մետալագործությունը։

Ուժեղանում է միջցեղային փոխանակությունը։ Ուժեղանում են կապերը Առաջավոր Ասիայի և հյուսիսային մերձ-սեծովյան շրջանների հետ։ Հասարակությունը գտնվում է մինչդասակարգային հարաբերությունների քայքայման վերջին փուլում։

Ութերորդ դարից (մ. թ. ա.) Անդրկովկասի հարավային շրջանները մտան Վանի թագավորության կազմի մեջ, որով արագացավ դասակարգա-

յին շերտավորման պրոցեսը։ Ուրարտացիները Անդրկովկասը է՛լ ավելի սերտորեն կապեցին Հին Արևելքի երկրների հետ, աջակցելով Անդրկովկասի կուլտուրայի աճմանը։ Մասնավորապես, Վանի թագավորության ազդեցության տակ, անդրկովկասյան ցեղերը յուրացրին և լայն գործածության մեջ դրին երկաթը։

Մեր տրամադրության տակ եղած հնագիտական նյութերը մեզ տալիս են արխայիկ հասարակության զարգացման ամբողջական պատկերը ընդհուպ մինչև VI դարը (մ. թ. ա.), այնուհետև մնում է բաց տարածություն, նյութերը պակասում են, և Հայաստանի հնագետների հետագա աշխատանքն է լինելու լրացնել այդ բացը։

Միայն այս դեպքում մենք կարող ենք ճիշտ հասկանալ այն պրոցեսը, որի հետևանքով ծագել է հայ ժողովուրդը, և նրա պատմությունը կապել այն երկրի հնագույն պատմության հետ, որտեղ կազմվել է Հայկական պետությունը։

Проф. Б. Б. Пиотровский

Древнейшие этапы истории и культуры Армении

(Р Е З Ю М Е)

В настоящей статье автор попытался обрисовать состояние археологического изучения древнейших эпох истории Закавказья, ознакомить читателей с новым материалом, открытым раскопками последних лет и в общих чертах охарактеризовать процесс развития первобытно-общинного строя на территории Армении, начиная с энеолита и кончая периодом начального освоения железа.

Приведенный материал показывает, что развитие общества в Закавказье представляет собою единый и непрерывный процесс. Теории миграции, теории принесения на Кавказ культуры в уже оформленном виде являются совершенно несостоятельными и ни в коей мере не оправдываются материалом.

Уже в конце III тысячелетия до н. э. в. Закавказье существуют оседлые поселения эпохи энеолита, т. е. медно-каменного века. Хозяйственной основой их было земледелие, наряду с которым существовало и скотоводство.

В начале II тысячелетия скотоводство интенсивно развивается и в составе стада начинает преобладать мелкий рогатый скот. Скот становится основным источником накопления богатств, сначала в руках племени, а затем и рода. В обществе того времени уже оформляются патриархальные отношения.

В середине II тысячелетия в Закавказье уже существуют отдельные племена, отличающиеся богатством, что отражают погребения вождей, открытые в Триалетии.

Вместе с тем растет межплеменной обмен, усиливаются связи со странами древнего Востока. В технике камень и медь постепенно заменяются бронзой.

Между отдельными племенами происходит постоянная вражда, причем главным объектом захвата являются скот и пастбища, поселение в это время принимает вид крепости.

В начале I тысячелетия завершается процесс развития скотоводства. Сильно выросшие стада не могут быть удовлетворены прежними пастбищами, возникает новая форма скотоводства—полукочевая, с выгоном стад на летнее время в горы.

В связи с этим происходит естественное разделение труда между горными и долинными районами, в первых начинает преобладать сководство, во вторых ирригационное земледелие.

Внутри общества Закавказья завершается отделение ремесла от сельского хозяйства, оформляется местная бронзовая металлургия, связанная с медно-рудными районами Закавказья.

Усиливается межплеменной обмен. Устанавливаются связи с Передней Азией и северным Причерноморьем. Общество находится в последней фазе разложения доклассовых отношений.

С VIII в. до н. э. южные области Закавказья были включены в состав Ванского царства, что ускорило процесс классовой дифференциации. Урарты еще теснее связали Закавказье со странами древнего Востока, содействуя росту закавказской культуры. В частности, под влиянием Ванского царства закавказские племена освоили и ввели в широкое употребление железо.

Археологический материал, имеющийся в нашем распоряжении, дает нам цельную картину развития архаического общества вплоть до VI в. до н. э., дальше идет лакуна, материал отсутствует и дальнейшая работа археологов Армении должна быть направлена на заполнение этого пробела.

Лишь в этом случае мы сможем правильно понять тот процесс, в результате которого возник армянский народ, и связать его историю с древнейшей историей той страны, на которой образовалось Армянское государство.